«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիները

Հետազոտող ուսուցիչ՝ Շուշանիկ Ալավերդյան

Արմավիրի մարզի Մայիսյանի միջնակարգ դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Արմինե Անտոնյան

Արմավիր 2023

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ուսուցանելն արվեստ է: Ուսուցիչը դրան հասնում է մեծ, համառ աշխատանքով և փորձով: Ուսուցիչը դիդակտիկայի կանոններին չպետք է ստրկորեն ենթարկվի, այլ իր անձնական փորձով գա այդ կանոնների դրական լինելու գիտակցությանը»:

Գ.Էդիլյան

Նախաայբբենական փուլի հիմնական խնդիրներն են՝ հեքիաթների միջոցով սովորողների ստեղծագործական, տրամաբանական-վերլուծական մտածողության և ուսումնական հմտությունների զարգացումը, բառապաշարի հարստացումը: Նախաայբբենական փուլի նպատակներին հասնելու ուղիները վարժությունների և առաջադրանքների միջոցով երեխաների համապատասխան հմտությունների զարգացումն է:

Նախաայբբենական փուլի կազմակերպման բարդությունները պայմանավորված են երեխաների տարիքային առանձնահատ-կություններով: Կրտսեր դպրոցական տարիքը անհատի զարգացման կարևոր փուլ է, մանկության գագաթնակետը: Պահպանվում են շատ որակներ, բայց նա արդեն սկսում է կորցնել մանկան անմիջականությունը, և առաջանում են մտածողության մեկ այլ որակ և տրամաբանություն: Ուսումը երեխայի համար նշանակալից գործունեություն է: Դպրոցում նա ձեռք է բերում ոչ միայն նոր գիտելիքներ, ու կարողություններ, այլև որոշակի սոցիալական կարգավիճակ: Փոխվում են հետաքրքրությունները, արժեքները, երեխայի կյանքի ամբողջ դրվածքը:

Նախաայբբենական փուլի հիմնական նպատակը երեխաներին գրաճանաչության նախապատրաստելն է: Այբբենարանում ներկայացված թեմատիկ նկարները, նկար-պատմությունները, նախադասության և բառի ընդհանրացված գծապատկերները, բառի վանկային ու հնչյունային կազմի գծապատկերները խոսքի զարգացման, լեզվական վերլուծությունների ու համադրությունների, կարդալու կարողության ձևավորման հիմքերն են:

Նախաայբբենական բաժինը կառուցված է այնպես, որ երեխաների մեջ արթնացնի հետաքրքրասիրություն, սեր գրքի և դպրոցի նկատմամբ, սովորելու ցանկություն: Հաճույքով կատարելով դասագրքի բազմաբնույթ առաջադրանքները՝ երեխաներն ուժեղ են զգում իրենց, դառնում են զվարթ, շփվող,և նրանց չի լքում հաջողակ լինելու զգացումը:

Նախագրային բաժնի հիմնական նպատակը երեխաներին աստիճանաբար ուսումնական գործընթացի մեջ ներգրավելն է, աննկատ կերպով նրանց ավելի ու ավելի բարդ

առաջադրանքների կատարմանը նախապատրաստելը, միաժամանակ, նրանց մտածողության զարգացումը, ստեղծագործական ունակությունների բացահայտումը, ճանաչողական հետաքրքրությունների խթանումը:

Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիները

Գրաճանաչության ցանկացած մեթոդով աշխատելիս, անկախ հայեցակարգային դիրքորոշումներից, գրեթե առանց բացառության առանձնացվում է հատուկ նախապատրաստական շրջան, որի ժամանակ լուծվում են ուսուցման այդ փուլի մանկավարժահոգեբանական ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մշակված գրաճանաչության շրջանի բովանդակությամբ և մեթոդներով, նախադպրոցական տարիքի երեխաների տարիքային առանձնահատկություններով, կրթօջախի տեսակով և կրթության՝ այդ օղակի նպատակներով պայմանավորված որոշակի խնդիրներ:

Գրաճանաչության նախաայբբենական կամ նախապատրաստական շրջանի հիմնական խնդիրները կարելի է բաժանել երկու խմբի՝ կազմակերպական և ուսումնական:

Կազմակերպական խնդիրներն են.

1. երեխաների ծանոթացում նրանց համար նոր ուսումնական գործունեությանը.

- ուսուցչի ծանոթությունը աշակերտների հետ,
- աշակերտների ծանոթացումը միմյանց հետ, մանկական կոլեկտիվի ստեղծում,
- ծանոթություն կրթական տվյալ, հաստատության կարգուկանոնին, դպրոցական շենքին,
- աշակերտական նստարանին ճիշտ նստելու, խոսելու ցանկության դեպքում ձեռք բարձրացնելու և ձայն խնդրելու, խոսելիս կամ պատասխանելիս անհրաժեշտության դեպքում կանգնելու ունակությունների մշակում,
- ընկերներին, ուսուցիչներին և միջավայրի մարդկանց լսելու և նրանց խոսքին բարեկիրթ արձագանքելու ունակության ձևավորում,
- գրքից և գրենական պիտույքներից օգտվելու և դրանց նկատմամբ խնամքի կանոնների յուրացում:

2. Հարմարեցում ուսումնական գործունեությանը:

Ուսումնական խնդիրները.

1. **Ուսումնական գործունեությանը երեխաների պատրաստականության մակարդակի բացահայտում:**

Այս խնդրի ուսումնասիրությունն ուսուցիչն իրականացնում է մինչև ուսումնական տարվա սկսելը: Ուսուցիչը պիտի ուսումնասիրի դասարանի աշակերտների անձնական գործերը, զրուցի ծնողների հետ, հանգամանորեն հետաքրքրվի նրանց առողջական տվյալներով:

Երեխաների պատրաստվածության մակարդակի ուսումնասիրությունը կարևոր նյութ է տալիս ուսուցչին՝ գրաճանաչության գործընթացը մեթոդապես ճիշտ կազմապերպելու համար: Ծանոթությունն իրականացվում է նախապես մշակված հարցերի շուրջ իրականացվող ակտիվ զրույցի, պարզ առաջադրանքների կատարման ճանապարհով: Արդյունքներն ամփոփելու համար ուսուցիչը պիտի պարզի յուրաքանչյուր աշակերտի՝

ա) խոսելու, բացատրվելու, հարցեր տալու, ընկերներին և ուսուցիչներին լսելու, ուսուցչի հանձնարարությունները կատարելու, ընկերների և ուսուցչի հետ հաղորդակցվելու ունակությունների մակարդակը,

բ) հնչյունային լսողության մակարդակն ու հայերենի հնչյունները ճիշտ արտասանելու կարողությունը.

- բառերն արտասանում է գրական հայերենի ճիշտ շեշտադրությամբ,
- հնչյուններն արտասանում է որոշակի սխալներով,
- ունի խղճուկ, կցկտուր, ցածրաձայն խոսք,
- ունի արտահայտիչ խոսք:

գ) բանավոր կապակցված խոսք.

- ունի իր տարիքին համապատասխան բառապաշար,
- անգիր գիտի և արտահայտիչ արտասանում է փոքրիկ բանաստեղծություններ,
- գիտի և կարողանում է վերարտադրել ունկնդրած պատմվածքները, հեքիաթները,
- ուսուցչի հարցերի օգնությամբ կարող է առաջադրված պարզ բովանդակություն ունեցող նկարների շուրջ կազմել մեկ-երկու՝ մտքով իրար հետ կապված նախադասություն,
- ուսուցչի հարցերին պատասխանում է ընդարձակ և ավարտուն նախադասություններով,
- ուսուցչի կամ օտար մարդկանց ներկայությամբ կաշկանդված է, չի խոսում.

դ) խոսքի շարահյուսական կառույցը.

- կազմված է հստակ կառուցվածք ունեցող շարահյուսորեն ավարտուն, պարզ նախադասություններով,
- կազմված է միայն պարզ, ոչ ավարտուն նախադասություններով,
- չունի ամբողջական նախադասություններ կառուցելու կարողություն,
- նախադասությունները թողնում է անավարտ և անցնում է նոր մտքի,
- նախադասությունները թողնում է անավարտ:

2. Նախաայբբենական շրջանի վերջում աշակերտների ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների սահմանները։

Գրաճանաչության այբբենական շրջանն արդյունավետ իրականացնելու համար երեխաները նախաայբբենական շրջանի վերջում պետք է՝

- գաղափար ունենան պատմության, նախադասության, բառի, վանկի, հնչյունի մասին և այդ եզրույթներն օգտագործեն խոսքում,
- պարզագույն սիմվոլիկ զննականության միջոցով(գծապատկեր) կարողանան ներկայացնել նախադասությունը, բառը, վանկը, տառը,
- ձայնավոր և բաղաձայն հնչյունները տարբերակել և գունային սիմվոլի միջոցով դրանք արտահայտեն գծապատերով,
- գիտակցեն ձայնավորի դերը վանկակազմավորման գործում,
- ունենան որոշակի բառապաշար և մտքերն ինքնուրույն կապակցված խոսքով ներկայացնելու կարողություն,
- ձեռքերը նախապատրաստված լինեն գրելուն,
- ունենան ներկելու, նկարելու, որոշակի գծային սահմանների մեջ հանձնարարվող գործողությունները կատարելու կարողություններ,
- կարողանան գրել հայերենի տառերի պարզ մասնիկները։

Ունկնդրում և խոսք.

- կարողանան ուսուցչի կարդացած կամ պատմած փոքրածավալ հեքիաթները, պատմվածքները, բանաստեղծություններն ունկնդրել և հարցերի օգնությամբ վերարտադրել,
- անգիր իմանան և արտահայտիչ արտասանեն սովորած բանաստեղծությունները, հանելուկները, շուտասելուկները,
- կարողանան մանկական թեմայով առանձին նկարների շուրջ մտքով իրար հետ կապված երկու-երեք նախադասություն կազմել, որոշել նախադասության կազմի մեջ մտնող բառերի քանակը,
- կարողանան պատմել ըստ տեսածի, ըստ ունկնդրածի, ըստ հիշողության, ըստ նկարի,
- կարողանան խաղալիքների և նկարների միջոցով բառերը խմբավորել ըստ ընդհանրացվող անունների և ըստ նրանց հատկանիշների։

Բ. Գրաճանաչության նախաայբբենական շրջանի դասերին ներկայացվող մանակավարժամեթոդական պահանջները

Գրաճանաչության նախապայբբենական շրջանի պարապմունքները կառուցվում են՝ հաշվի առնելով դպրոց նոր ընդունված երեխաների տարիքային առանձնահատկությունները. մասնավորապես ուշադրության և հիշողության առանձնահատկությունները. երեխաները երկար ժամանակ չեն կարող լսել, զբաղվել միևնույն գործողությամբ, արագ հոգնում են և այլն։ Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է նրանց գործունեության ձևերը փոխել յուրաքանչյուր 10-15 րոպեն մեկ՝ դասի յուրաքանչյուր փուլում պարապմունքն իրականանացնելով դասի ընդհանուր պլանին և նպատակին համապատասխան։ Աշխատանքը դասի ժամանակ կազմակերպվում է այնպես, որ զրույցներն ու պատմություններն ընդհատվեն երեխաների ակտիվ գործունությամբ, այդ թվում՝ ֆիզիկական վարժություններով։ Դասերի ժամանակ նախատեսվում են հետաքրքրաշարժ և խաղային պահեր. հանելուկների զուշակում, հեքիաթների պատմում, դրանց բեմադրում, ազատ կամ թեմատիկ նկարչություն, երգ, պար ռիթմիկա և այլն։

Նախապայբբենական դասի հիմնական մեթոդական շղթան (շղթայի քայլերն իրականացվում են 2 դասաժամի ընթացքում).

1. Կազմակերպական պահ,
2. Տնային աշխատանքի ստուգում,
3. Ֆիզկուլտ դադար,
4. Անցած ուսումնական նյութի կրկնություն, ամրակայում,
5. Հանձնարարված թեմայի կամ թեմատիկ նկարների շուրջ հարցազրույց,
6. Շարժուն խաղեր,
7. Հնչյունային վերլուծություն, նոր նյութի հաղորդում,
8. Դիդակտիկ և հետաքրքրաշարժ խաղեր,
9. Նոր նյութի ամրակայում, մարզողական վարժություններ,
10. Մատները գրելուն նախապատրաստող վարժություններ,
11. Գրում,
12. Ամփոփում։

Գ. Գրաճանաչության նախապայբբենական շրջանում իրականացվող աշխատանքի բովանդակությունը

Այս շրջանում աշակերտները յուրացնում են գրաճանաչության ուսուցման արդյունավետության համար կարևոր լեզվական մի շարք հասկացություններ՝ գործնականորեն նախապատրաստվելով կարդալու և գրելու գործընթացին։

Խոսք: Մեծադիր թեմատիկ նկարի շուրջ ուսուցչի հարցերի օգնությամբ երեխաները կազմում են մտքով իրար հետ կապված մի քանի նախադասություն, որոնց ամբողջությունը

հետագայում նրանք անվանում են պատմություն: Տարբեր նկարների շուրջ երեխաներն ուսուցչի հարցերի օգնությամբ պատմություններ են հյուսում, վերարտադրում են ունկնդրած փոքրիկ պատմվածքները և հեքիաթները: Երբ այս կարողությունները որոշակի մակարդակով ձևավորված են, կարելի է անցնել հաջորդ քայլին՝ գաղափար տալ գծապատկերի մասին: Այդ նպատակով ուսուցչուհին բացատրում է, որ պատմությունը կարելի է գրել նույնիսկ առանց տառերը ճանաչելու, այսինքն՝ գծել:

Ուսուցիչը գծում է մի ուղղանկյուն և ասում.

- Պատմությունը տեղավորված է այս վանդակի մեջ: Այսինքն՝ վանդակը պատմության տնակն է: Ուրեմն մենք ինչ պատմություն էլ որ հյուսենք, կարող ենք տեղավորել տնակում:

Խոսքի զարգացման նպատակով անհրաժեշտ է պարբերաբար աշխատանք տանել ոչ միայն նկարների շուրջ մեկ-երկու՝ մտքով իրար հետ կապված նախադասություններ կազմելու կարողության մշակման, այլև երեխաներին անընդհատ խոսեցնելու ուղղությամբ: Պիտի աստիճանաբար հասնել նրան, որ աշակերտները կարողանան գրագետ և ամբողջական խոսքով արտահայտել այն, ինչ կատարում են: Առաջին շրջանում ուսուցիչն ինքը պիտի տա խոսքի նմուշ՝ անընդհատ խոսելով երեխաների հետ:

Նախաայբբենական շրջանում իբրև նմուշօրինակ ուսուցչի հյուսած պատմությունը պետք է՝

- ինչի հանդարտ, պարզ, երեխաներին ընկալելի ոճով,
- կազմված լինի 3-4 նախադասությունից,
- նախադասությունները կազմված լինեն 2-3 բառից,
- նախադասությունների կազմի մեջ մտնող բառերը վերցված լինեն երեխաների ակտիվ բառապաշարից,
- խոսքը պետք է զուգորդվի ցուցադրումներով:

Գաղափար նախադասության մասին: Թեմատիկ նկարների շուրջ պատմություն հյուսելու, ազատ, ինքնուրույն խոսք կառուցելու տարրական կարողության ձևավորումից հետո պիտի մշակել ուսուցչի հարցերի օգնությամբ նախադասությունները պատմությունից առանձնացնելու ունակություն: Բնականաբար, երեխաների համար միանգամից դժվար է զգալ պատմության կազմի մեջ մտնող նախադասությունների սահմանները: Այդ կարողության մշակման համար ուսուցիչը դանդաղ, նախադասություն առ նախադասություն պիտի արտասանի պատմությունը՝ առաջարկելով երեխաներին ծափերի միջոցով հաշվել, թե այն քանի մասից է կազմված: Աշակերտները հաշվում են և որոշում, որ պատմությունը կազմված է, ասենք երեք կամ չորս մասից: Ուսուցիչը երեխաների օգնությամբ պատմության գծապատկերը բաժանում է համապատասխան թվով մասերի՝ բացատրելով.

«Քանի որ մեր կազմած պատմությունն ունի 3 մաս, ուրեմն՝ գծապատկերը ևս պետք է ունենա 3 մաս»:

Այնուհետև պետք է բացատրվի, որ այս մասերից յուրաքանչյուրը պատմության մեկ մասն է և պատմության բովանդակության հետ կապված մեկ միտք է արտահայտում: Ուրեմն՝ պատմության մեջ կա 3 միտք: Ապա **միտք** բառի փոխարեն երեխաները սովորում են օգտագործել **նախադասություն** բառը և գծել նախադասության գծապատկերը.

Ցուցադրական պաստառի միջոցով կարելի է պատմության կազմի մեջ մտնող նախադասությունները ներկայացնող շերտիկները հանել՝ ակնառու դարձնելու համար **նախադասություններն առանձին միավորներ են** հասկացությունը: Այնուհետև երեխաներին պիտի բացատրել, որ ամեն մի առանձին, նոր սկսվող միտք՝ նախադասություն պետք է սկսել մեծատառով գրել, և գծապատկերի վրա ցույց տալ, թե ինչպես է այդ նշվում: Երեխաների ուշադրությունը պիտի հրավիրել նաև գծապատկերի վերջում դրված վերջակետի վրա և բացատրել.

- Նախադասության գծապատկերի վերջում դրված է երկու կետ: Այդ նշանակում է, որ միտքն ավարտված է, **նախադասությունը վերջացել է**: Եկե՛ք վերջում դրված այս կետերին անվանենք **վերջակետ:**

Այսպիսով՝ աշակերտներն իմանում են, որ ամեն մի պատմություն կազմված է նախադասություններից, իսկ նախադասությունը սկսվում է մեծատառով, և վերջում դրվում է վերջակետ:

Գաղափար բառի մասին: Նախադասությունը վերլուծելու և նրա բաղադրիչները դիտարկելու միջոցով աշակերտներին գաղափար պետք է տալ նաև բառի մասին, որպեսզի բառն ամենից առաջ ընկալվի որպես նախադասության բաղադրիչ մաս նապա նոր՝ որպես որևէ կոնկրետ իմաստ արտահայտող առանձին լեզվական միավոր:

Բառի մասին գաղափարը նույնպես տրվում է գծապատկերների օգնությամբ: Ուսուցչուհին արտասանում է մի նախադասություն (օրինակ՝ Անին դպրոց գնաց:), գրատախտակին գծում է այդ նախադասության գծապատկերը: Այնուհետև երեխաներին առաջարկում է ծափերի միջոցով հաշվել, թե քանի մասից է կազմված այդ նախադասությունը:

Ուսուցչուհին դանդաղ, դադարներով արտասանում է նախադասությունը՝ յուրաքանչյուր բառի հետ ծափ տալով: Երեխաները նույնպես ծափ են տալիս և ուսուցչուհու օգնությամբ որոշում նախադասության մասերի թիվը: Ուսուցչուհու օգնությամբ նախադասության գծապատկերը բաժանվում է երեք մասի: Այնուհետև **մաս** բառը փոխարինվում է բառով: Իբրև բառ է ներկայացվում նաև **է** օժանդակ բայը:

Նախապայբբենական շրջանում շահեկան է **բառ** հասկացությունը կապել կոնկրետ իմաստի, զգայական ընկալման հետ, այդ նպատակով վերլուծության համար ընտրված բոլոր բառերը պետք է առարկայական լինեն: Անշուշտ, դրանք որոշակի կապի մեջ պետք է լինեն թեմատիկ նկարի կամ նկար-նախադասության բովանդակության հետ, որպեսզի երեխաների համար պարզ լինի, թե որտեղից են վերցված այդ բառերը, ինչով են դրանք առնչվում կենդանի խոսքին: Գծապատկերի շուրջ տարվող վերլուծական աշխատանքը ժամանակատարր գործընթաց է ոսուցչից մեծ ջանքեր է պահանջում: Սակայն այս խնդրի լուծումն ապահովում է գրաճանաչության գործընթացի արդյունավետ իրականացումը: Բառի շուրջ աշխատանք տանելիս կարևոր է, որ աշակերտները հասկանան առարկայի և այն բառի տարբերությունները, որն անվանում է այդ առարկան: Այդ տարբերություններն առավել ակնառու կդառնան, եթե ցուցադրվի առարկան, և աշակերտին հարցնեն, թե ինչ կարելի է անել նրանով: Օրինակ *գրչով* կարելի է գրել, *գրիչը* կարելի է դնել սեղանին, վերցնել և այլն: Իսկ ա՛յ *գրիչ* բառով այդ բոլոր գործողությունները կատարել հնարավոր չէ: *Գրիչ* բառը միայն կարելի է **արտասանել, լսել, գրել կարդալ**: Այս և նման վարժությունների միջոցով կարելի է ցույց տալ **բառի** և **առարկայի** տարբերությունը:

Որպեսզի երեխաները հասկանան, թե ինչ դեր ունեն բառերը նախադասության մեջ, և որ դրանց ճիշտ դասավորվածության դեպքում միայն նախադասությունը իմաստ կարտահայտի, կարելի կազմակերպել «Մենք նախադասության բառեր ենք խաղը»:

Խաղի ընթացքը: Երեխաների կազմած նախադասություններից մեկի (համեմատաբար պարզ) բառերը «բաժանվում են» երեխաներին: Ամեն մեկը դառնում է նախադասությանը մեկ բառը: Օրինակ՝ վերցնենք «Արմենը իմ դպրոցական ընկերն է» նախադասությունը: Երեխաներին «բաժանվում են» նախադասության բառերը և հանձնարարվում, որ յուրաքանչյուրը լավ մտապահի իր բառը: Երեխաները կանգնում են այնպիսի հաջորդականությամբ, որ երբ յուրաքանչյուրն իր բառն արտասանում է, դասարանը կրկնում է իր նախադասությունն ամբողջությամբ: Այնուհետև երեխաների տեղերը փոխվում են՝ բառերը նույնը պահելով: Նորից յուրաքանչյուրն ասում է իր բառը: Դասարանը կրկնում է և եզրակացնում, որ անիմաստ բան ստացվեց. ասվածը նախադասություն չէր: Այս խաղը նպաստում է աշակերտների մեջ ուսումնական գործունեության կարևոր բաղադիրչների՝ սեփական գործողությունների կատարման

հսկողություն և վերահսկման, ինչպես նաև իր կատարած աշխատանքի գնահատման ունակությունների մշակմանը:

Բառի կազմությունը: Վանկ: Վանկի մասին գաղափար կարելի է տալ միայն այն ժամանակ, երբ բառի մասին տրված հասկացությունը ամրակայվել է: Նախադասություններից բառն առանձնացնելու համար դարձյալ գծվում են մի քանի նախադասությունների գծապատկերներ: Այնուհետև ընտրվում է մեկ նախադասություն, դրանից առանձնացվում որևէ բառ: Ցանկալի է, որ այն ունենա երկու վանկ: Իսկ հետո կարելի է աշխատանքը տանել եռավանկ, քառավանկ բառերի շուրջ: Ուսուցչուհին նախ ընտրված բառն արտասում է՝ առանց վանկերի բաժանելու, ապա՝ վանկերի բաժանելով: Շահեկան է այս աշխատանք իրականացնելիս ցուցադրել այն առարկաները կամ նրանց նկարները, որոնց անվանումների շուրջ տարվում է վանկային աշխատանքը: Յուրաքանչյուր առարկայի անուն երեխաներն են արտասանում, ծափ տալով՝ այն բաժանում են մասերի և հաշվում մասերի քանակը: Երեխաները գալիս են այն համոզման, որ շրջապատում կան առարկաներ, որոնց անունները կարելի է արտասանել մեկ ծափով, երկու ծափով և երեք ծափով այլն: Նրանց պետք է բացատրել, որ այդ ծափերի թիվը պայմանավորված է բառերի մասերի քանակով:

Վանկի մասին տրված գաղափարի ամրապնդմանը կարող են նպաստել նաև առարկայական նկարների շուրջը կատավող դասդասումները և վանկային վարժությունները կամ վանկախաղերը: Այսպես օրինակ՝

1. Ուսուցիչը կամ երեխաներից մեկն ասում է երկվանկ կամ եռավանկ բառի մի մասը, իսկ խաղընկերը լրացնում է բառի մի մասը և ստանում բառ: Եթե խաղընկերը կարողանում է այդ անել, ապա խաղը նրա հետ շարունակվում է մինչև ղեկավարի կողմից նրան փոխելը, իսկ եթե չի կարողանում անմիջապես ամբողջացնել բառը, խաղից դուրս է մնում և նրան փոխարինում է հաջորդ խաղացողը:

2. Ուսուցիչը կամ երեխաներից մեկը՝ խաղավարը գնդակը նետում է շրջանով կանգնած երեխաներից մեկին և ասում է որևէ բառ, իսկ գնդակը բռնողը պետք է կարողանա այն վանկերի բաժանել: Եթե չի կարողանում այդ առաջադրանքը ճիշտ կատարել, խաղից դուրս է մնում, և գնդակը նետվում է մեկ ուրիշի:

Սկզբում բառի ինքնուրույն միավորներին երեխաներն անվանում են մասեր, որովհետև այս մասն ավելի լավ է արտահայտում նրանց էությունը, և երեխաները շուտ են հասկանում: Իսկ հետագայում երբ բառի մեջ եղած այս ինքնուրույն միավորների վերաբերյալ երեխաները որոշակի գաղափար կկազմեն, կկարողանան տրված բառը

մասերի բաժանել, ասել, թե այն քանի մասից է կազմված. արդեն կարելի է օգտագործել եզրույթը՝ ասել , որ բառի այդ մասերին անվանում ենք **վանկ**:

Բառը վանկերի բաժանելու, վանկեկերն իրար միացնելով բառեր ստանալու, բառի մեջ վանկի տեղը գտնելու կարողությունների զարգացման նպատակով կարելի է կատարել վարժություններ, խաղալ դիդակտիկ խաղեր: Օրինակ՝ կարելի է կազմակերպել «Ո՞ր առարկան չկա» խաղը:

Խաղի համար անհրաժեշտ նյութեր: Ուսուցչի սեղանին դասավորված են երեխաներին ծանոթ տարբեր առարկաներ՝ խաղալիքներ:

Խաղի ընթացքը. Աշակերտներից մեկը հրավիրվում է ուսուցչի սեղանի մոտ, նրան առաջարկվում է ուշադիր դիտել սեղանի վրա դրված առարկաները: Միաժամանակ ուսուցիչն աշակերտներին հայտնում է, որ նրա՝ դասարանից դուրս գալուց հետո պիտի պահի առարկաներից մեկը: Ինքը պիտի գտնի՝ որ առարկան է բացակայում և ասի, թե քանի վանկից է կազմված այդ առակայի անունը: Երեխան դուրս է մնում: Պահում են առարկաներից մեկը: Դրսում գտնվող երեխան ուսուցչի հրավերով ներս պիտի գա, ուշադիր դիտի սեղանին դրված առարկաները և որոշի՝ որ առարկան չկա, ասի նրա անունը և հաշվի բառի վանկերի քանակը: Եթե երեխան ճիշտ է որոշում արժանանում է ծափերի, իսկ եթե երեխան սխալվում է պիտի դասարանի որոշմամբ արտասանի, երգի, հանելուկ ասի և այլն:

Այս խաղի և ընդհանրապես այս շրջանի դասերի ընթացքում ուսուցիչը պիտի անընդհատ օգտագործի առարկա բառը, որպեսզի այն ընկալելի դառնա երեխաների համար, դառնա ծանոթ, ակտիվ բառ, որովհետև հետագայում առարկա բառը պետք է գործածվի գոյականի մասին գաղափար տալիս:

Գաղափար հնչյունի մասին: Ուսուցչի հանձնարարությամբ երեխաներն ասում են միավանկ բառեր: Ուսուցիչը դրանցից ընտրում է և գրատախտակին գծում (կամ գծել տալիս երեխաներին) այն բառերի գծապատկերները, որոնք թեև միավանկ են, բայց ունեն տարբեր քանակի հնչյուններ: Բնականաբար, դրանց հնչյուային գծապատկերները տարբեր կառուցվածք կունենան:

- Ինչո՞ւ են այս բառերի գծապատկերները տարբեր. չէ՞ որ դրանք արտասանվեցին մեկ ծափով (այսինքն՝ բոլորն էլ միավանկ են):

Որպես կանոն, այս հարցին երեխաները չեն պատասխանում: Ուսուցչուհին դարձյալ արտասանում է նույն բառերն այնպես ընդգծված, որ նրանց երկար և կարճ արտասանությունից երեխաները կռահում են (եթե չեն կռահում կարելի է բացատրել):

-Բառերը երկար են կամ կարճ՝ կապված այն բանի հետ, թե նրանց մեջ հնչող ձայների թիվը մե՞ծ է, թե փոքր: Հիմա ես կասեմ բառերը, դուք որոշեք՝ ինչ է հնչում բառի սկզբում ինչ լսեցիք բառի սկզբում:

Այնուհետև աշակերտների ուշադրությունը հրավիրում է բառի վերջին հնչյունի վրա:

- Ի՞նչ է հնչում բառի վերջում, ի՞նչ եք լսում:

-Ի՞նչ է հնչում բառի մեջ, ի՞նչ եք լսում:

Համեմատաբար մատչելի է բաց վանկերի հնչյունային վերլուծությունը: Վերջինս առավել բարդանում է, երբ երեխան առանց վանկատելու փորձում է մի քանի անգամ արագ արտասանել բառը. այս դեպքում թույլ հնչող բաղաձայնը կարող է դուրս ընկնել, ուժգին հնչողը գրվել և այլն:

Գաղափար ձայնավոր և բաղաձայն հնչյունների մասին: Ձայնավոր և բաղաձայն հնչյունները երեխաները պիտի սովորեն տարբերակել գործնական ճանապարհով: Այս նպատակով կատարվում է որևէ բառի հնչյունային վերլուծություն, օրինակ՝ լար: Ուսուցչուհին խնդրում է դասարանին խմբով արտասանել այն հնչյունը, որը լսվում է բառասկզբում: Երեխաները երկար արտասանելուց հետո հայտնաբերում են, որ **լ** հնչյունը երկար արտասանելուց կետո կորչում է, և լսվում է **ը**: Նույն ճանապարհով նրանք նկատում են, որ այդպես է լսվում նաև **ր** հնչյունը:

- Իսկ հիմա եկե՛ք արտասանենք այն հնչյունը, որը լսվում է բառամիջում: «ա՛ա՛ա՛»,- երկար արտասանում են երեխաները և աշխուժորեն նկատում, որ **ա** հնչյունը մինչև վերջ լսվում է: Այսպիսի աշխատանք է կատարվում մի քանի միավանկ բառերի շուրջ՝ խորացնելով բացատրությունը:

Ուսուցչուհին ամփոփում է. «**Ա** արտասանելիս, ինչպես նկատեցիք, օդը բերանից դուրս է գալիս առանց արգելքի: Ուշադրությո՛ւն դարձրեք՝ **ա՛ա՛ա՛**, լեզուն բերանի մեջ չի կպչում պատերին: Իսկ հիմա արտասանենք՝ **լը՛ը՛**, տեսե՛ք, լեզուն կպչում է վերևի ատամներին և ձայնը արգելքով է բերանից դուրս գալիս»:

Բառի հնչյունային վերլուծությունն իրականացվում է մի քանի գործողությունների հաջորդաբար կատարման ճանապարհով.

1. **Երեխան արտասանում է բառը՝ ցույց տալով բառի գծապատկերը:** Կարդալ չիմացող, տառերն անգամ չճանաչող երեխայի համար սա բավականին բարդ գործողություն է, որովհետև նա ոչ թե արագ պիտի արտասանի բառը՝ ձեռքը սահեցնելով գծապատկերի վրայով, այլ պիտի ցույց տա հատկապես այն

վանդակը, որին համապատասխանող հնչյունն ինքն արտասանում է: Բնականաբար, շահեկան է առաջին վարժությունները կատարել երկհնչյուն, եռահնչյուն բառերի շուրջ: Իսկ հետագայում կարելի է աստիճանաբար ավելի բազմահնչյուն բառեր ընտրել:

2. **Բառի մեջ հնչյունի առանձնացում ձայնի բարձրությամբ:** Երեխաների այս կարողությունը ձևավորելու համար նախ ուսուցիչը պիտի տա խոսքի օրինակ՝ դարձյալ ընտրելով եռահնչյուն բառեր: Բառի հնչյունային վերլուծության ժամանակ պիտի որոշել, թե որ հնչյունը պետք է առանձնացնել, հնչեցնել ընդգծված, երկար և առանձնացված, կրկնել այդ հնչյունը: Օրինակ, եթե կամենում ենք **առու** բառի մեջ առանձնացնել **ա** հնչյունը, պետք է արտասանել **ա-ա-ռու,** իսկ եթե **ռ** հնչյունը՝ **ա-ռ-ռ-ռ-ռ-ու**, եթե՝ **ու** հնչյունը՝ **առու-ու-ու-ու**: Պարզ է, որ բառի այսպիսի արտասանությունը երեխայի համար անբնական է, խորթ, անսովոր, հետևաբար պետ է այդ գործողությունները կատարել իբրև խաղ:
3. **Բառի հնչյունային վերլուծություն՝ գծապատկերի** վրա գունավոր կավճով (կամ տետրում՝ գունավոր մատիտներով) նշելով համապատասխան հնչյունի վանդակը:

   Գործողությունների թվարկությունն իսկ ցույց է տալիս, թե որքան հսկայական մտավերլուծական աշխատանք է կատարում երեխան այս ուսումնական խնդրի լուծման ժամանակ: Գործողությունների հաջորդականության պահպանման շնորհիվ բոլոր երեխաները աստիճանաբար յուրացնում են այս ուսումնական խնդիրը:

Այս աշխատանքը կատարելու համար առաջին դասարանցին պետք է կարողանա բառն արտասանել, արտասանած յուրաքանչյուր հնչյունի տեղը ցույց տալ գծապատկերի վրա, այնուհետև բառն արտասանել ամբողջությամբ: Պիտի նկատի ունենալ, որայս կարողությունները միանգամից չեն մշակվում, սակայն մինչև դրանք հմտություն չդառնան, տառաճանաչություն սկսելն անիմաստ է: Որպեսզի յուրաքանչյուր երեխայի մեջ ձևավորվի այդ հմտությունը, նա պիտի ինքնուրույն ասի բառը, գծի գծապատկերը ր գունավորի համապատասխան վանդակները:

Այս գործողությունները պիտի կրկնվեն գրաճանաչության նախապրբենական շրջանի յուրաքանչյուր դասի ժամանակ:

Պարզ է, որ նման աշխատանքը ոչ միայն կհոգնեցնի երեխաներին, այլև կձանձրացնի: Կանխելու համար այդ ձանձրույթը և աշխատանքը հոգնեցուցիչ չդարձնելու համար պիտի օգտագործել դիդակտիկ նյութեր և տարաբնույթ հնչյունային խաղեր: Այս աշխատանքներից հետո երեխաները պիտի ձևակերպեն եզրակացություններ, անշուշտ, ոչ սահմանման ձևով:

Եզրակացություն՝ Լեզվի բոլոր հնչյունները բաժանվում են երկու խմբի. մի խմբի հնչյուններն արտասանվում են մինչև վերջ, և լսում ենք միևնույն հնչյունը՝ Դրանք ձայնավորներն են, այսինքն՝ ձայն ունեցող հնչյունները, իսկ մյուս խմբի մեջ մտնողները կարճ են արտասանվում, արագ վերջանում են ու շարունակվում են ը-ով՝ Դրանք բաղաձայններն են՝ Ապա երեխաներն իրենք պիտի ասեն բառեր, գծեն դրանց հնչյունային գծապատկերները, գտնեն հնչյունի տեղը վանկում, արտասանելով առանձին հնչյունները՝ որոշեն՝ ձայնավո՞ր են դրանք, թե՞ բաղաձայն, հետո ձայնավորի վանդակը ներկեն՝ Վարժությունների միջոցով երեխաներն աստիճանաբար ձեռք են բերում երկվանկ, եռավանկի բառերի մեջ ձայնավորները որոշելու և գծապատկերում դրաց տեղը ցույց տալու կարողություններ՝ Ապա երեխաների ուշադրությունը պիտի հրավիրել վանկատած բառերի հնչյունային գծապատկերների վրա և բերել այն համոզման, որ յուրաքանչյուր վանդակի մեջ կա մեկ ներկած վանդակ, այսինքն՝ մեկ ձայնավոր հնչյուն՝ Նշանակում է՝ յուրաքանչյուր վանկի համար անպայման ձայնավոր հնչյուն է պետք՝ Օրինակ՝ **ձու, շուն, ատամ** բառերի գծապատկերները համապատասխանաբար կլինեն



Լեզվական այս նախագիտելիքներն, անշուշտ, դյուրին չէ յուրացնելը, և ուսուցչից պահանջվում է համբերատար, մանրակրկիտ, երկարատև աշխատանք՝ Սակայն աշխատանքի այս ողջ համակարգը բարերար հող է նախապատրաստում գրաճանաչության շրջանի կազմակերպման համար, և որ ամենակարևորն է՝ ապահովում է գիտակցաբար և հասկանալով կարդալու կարողության ձևավորման սկիզբ՝

Գրելու նախապատրաստում՝ Գրաճանաչության նախաայբբենական շարջանի կարևոր խնդիրներից է նաև գրելու նախապատրաստումը՝ Այդ աշխատանքներում կարևորվում են.

- մատների մանր ֆալանգների ամրացումը,
- ձեռքի դաստակի մարզումը,
- տեսողական հիշողության զարգացումը,
- գրելու ժամանակ հիգիենայի կանոնների կարևորության գիտակցումն ու դրանց պահպանման ունակության մշակումը,
- տետրի մեջ կողմնորոշվելու կարողության մշակումը,
- ուրվագծերով տրված նկարների գունավորում՝ առանց սահմաններն անցնելու,
- ձախից աջ գրության ապահովումը,
- հայերենի հիմնական տառամասնիկները գրելու կարողության մշակումը՝

Այս խնդիրների լուծումը պիտի սկսել նկարչությունից, ծեփից, ապլիկացիայից և մատների մանր ֆալանգների ամրացման, դաստակի մարզման վարժություններից։

Սովորաբար երեխաները սիրում են նկարել և շատ են նկարում, սակայն նպատակային նկարչությունն ունի իր խնդիրները.

- անհրաժեշտ է երեխաներին սովորեցնել գունավորել նկարն՝ առանց տրված պատկերների սահմաններն անցնելու՝ առաջարկելով նախ՝ մեծ, ապա՝ փոքր պատկերներ,
- մշակել ձեռքի՝ ձախից աջ գնացող շարժումներով, առանց տետրը շարժելու մեկ ուղղությամբ ներկելու ունակությունը,
- սովորեցնել մատիտը ճիշտ բռնել,
- նկարչական տետրը դնել սեղանին 45՛ թեքությամբ և պահպանել տետրից աչք ընկած տարածության սահմանը։

Նկարելու, ներկելու ժամանակ աշխատանք պիտի տանել, որ երեխաները ոչ միայն կարողանան լսել ուսուցչի բացատրություններն ու հրահանգները, այլև կատարեն դրանք։ Անհրաժեշտ է նաև մշակել նկարելուց, ներկելուց առաջ անելիքը ծրագրելու և այդ մասին մատմելու, խոսելու ունակություններ։

Հայերենի տառամասնիկներն ուսուցանելիս պիտի նկատի ունենալ, որ երեխաները գրել են սովորելու ամբողջական տառերով։ Մասնիկների գրուսուցումը պարզապես գրելու նախապատրաստում է։

Ինչպես նշեցինք, հնչյունային լսողության զարգացումը գրաճանաչության գործընթացի արդյունավետության ապահովման գլխավոր պայմանն է և նախաայբբենական շրջանի խնդիրներից հիմնականը։

Նախ խոսենք այն մասին, թե ինչ է իրենից ներկայացնում հնչյունային լսողությունը, և ինչու է այն կարևոր կարդալու և գրելու կարողությունների գործընթացում։

Դաշնամուր նվագելու կամ երգելու համար մարդը պիտի ունենա երաժշտական լսողություն, այսինքն՝ նա պիտի կարողանա լսել երաշտական ստեղծագործությունը ոչ միայն ամբողջական, այլև նրա ականջը պիտի տարորոշի, վերլուծի, ընկալի ամբողջական երաժշտական ստեղծագործության առանջին հնչյունները՝ նոտաները։ Որպեսզի երեխան կամ սկսնակ երաժիշտը կարողանա երաժշտական գործունեություն ծավալել, փորձառու ուսուցիչներն սկսում են աշխատանք տանել նրանց երաժշտական լսողության՝ երաշժտության առանձին հնչյունները լսելու, առանձնացնելու և վերարտադրելու կարողությունների ձևավորման ու զարգացման ուղղությամբ, հետո նոր սովորողներին ծանոթացնում են լսած յուրաքանչյուր հնչյունի նշանին՝ նոտային։

Այնուհետև՝ մինչև ամբողջական երաժշտական ստեղծագործություն նվագել սովորեցնելը, երեխաները պարզ վարժություններ են կատարում՝ իրենց երաժշտական լսողության զարգացման ուղղությամբ։

Այս աշխատանքային քայլերը պետք է իրականացնել նաև երեխաներին գրաճանաչ դարձնելու և գրել-կարդալ սովորեցնելու ողջ գործընթացում։ Տարբերությունը մեկն է՝ բոլոր մարդկանց երաժշտական լսողությունը զարգացած չէ, և հաճախ հնարավոր էլ չէ այն բարձր մակարդակով զարգացնել, այնինչ բոլոր առողջ երեխաների՝ գրաճանաչության համար անհրաժեշտ հնչյունային լսողությունը հնարավոր է զարգացնել։ Այլ է տարբեր արատներով պայմանավորված հնչյունային լսողության խաթարում կամ անբավարար զարգացած հնչյունային լսողություն ունեցող սովորողների խնդիրը։

Հայոց լեզվից սովորողների ստացած ցածր գնահատականները կամ այդ առարկայից անբավարար առաջադիմությունը հաճախ ուսուցիչներն ու ծնողները բացատրում են կա՛մ երեխայի ցրվածությամբ, անուշադրությամբ, կա՛մ ուսման նկատմամբ անբարեխիղճ, անտարբեր վերաբերմունքով։ Եվ հաճախ սխալվում են, որի արդյունքում սովորողները ժամանակին չեն ստանում անհրաժեշտ օգնություն, որը հանգեցնում է **կարդալու և գրելու կարողությունների անբավարար զարգացման։** Վերջինս էլ իր հերթին պատճառ է դառնում ընդհանրապես ուսումնական ոչ լիարժեք գործունեության։ Անառարկելի է, որ ուսուցման սկզբնական շրջանում կարդալու կարողության ձևավորումը նպատակ է, իսկ կրթության հետագա փուլերում կարդալը դառնում էթ գիտելիքների ձեռքբերման, այսինքն՝ ուսումնական գործունեություն ծավալելու միջոց։

Այսպիսով, ուսուցչի խնդիրն է՝ խորանալ աշակերտների ցածր առաջադիմության պատճառների մեջ և բացատրել վերը նշվածը՝ երեխային ուղարկել լոգոպեդի մոտ՝ որոշելու՝ երեխան ունա՞կ է սովորելու հանրակրթական դպրոցում (պարզապես անհրաժեշտ է աշխատանք տանել հնչյունային լսողության զարգացման և այլ ունակությունների ձևավորման ուղղությամբ), թե՞ անհրաժեշտ է այլ բնույթի օգնություն։

Առաջին որոշման դեպքում այդ երեխայի հետ կիրականացվի այնպիսի համակարգված աշխատանք, որը և արդյունք կտա՝ առանց երեխային անընդհատ գրել և կարդալ տալու նպատակ հետապնդող վարժությունների մեջ «խեղդելու»։

Սովորաբար դպրոց ընդունվող բոլոր առողջ երեխաներն ունեն լիարժեք հնչարտաբերման կարողություններ, ակտիվ բառապաշար և քերականորեն ճիշտ կառուցված խոսք, սակայն ոչ բոլորն են կարողանում լսել և առանձնացնել իրենց արտասանած բառերի հնչյունները։

Վերջին տարիներին, վաղ ուսուցման, ինչպես նաև ներառական կրթության հանգամանքներով պայմանավորված, առաջին դասարանցիների մեջ հաճախ է նկատվում հնչյունային լսողության զարգացման անբավարար մակարդակ: Այդ լսողության անբավարաությունն առավել ակնհայտ է մտավոր զարգացման հապաղում ունեցող երեխաների մեջ, որն էլ հանգեցնում է գրելու և կարդալու գործընթացներում լուրջ դժվարությունների:

Հնչյունային լսողության անբավարար զարգացման դեպքում երեխաները սովորաբար թույլ են տալիս այսպիսի սխալներ.

- տառերը ճանաչում են, բայց չեն կարողանում համադրել, բառեր ստանալ ու կարդալ,
- բաց են թողնում բառերի վերջին տառերը կամ վանկերը,
- շփոթում են տառերը, վանկերը,
- շփոթում են զ-ս, լ-ր, ձ-ծ, շ-ս և մի շարք այլ բաղաձայններ, ինչպես խոսելիս, այնպես էլ կարդալիս և գրելիս,
- տառեր և վանկեր են ավելացնում,
- բառը կարդում են՝ գուշակելով վերջին վանկը կամ տառերը:

Սովորաբար նման դեպքերում թե՛ ուսուցիչները, թե՛ ծնողները երեխաների հետ տանում են լրացուցիչ աշխատանք՝ նրանց անընդհատ կարդալ և արտագրել հանձնարարելով: Որպես կանոն՝ այս աշխատանքը ոչ միայն չի օգնում խնդրի լուծմանը և ստացվում է չնչին արդյունք, այլև երեխաների մեջ ուսման նկատմամբ առաջացնում է անտարբերություն, ձևավորվում է հուսահատություն, սեփական ուժերի նկատմամբ անվստահություն:

Ուսուցիչներն էլ, ծնողներն էլ պիտի գիտակցեն, որ եթե անգամ հնչյունային լսողության զարգացմանը միտված աշխատանքներն իրականացվում են խաղի միջոցով, ապա այն ևս լուրջ աշխատանք է: Միաժամանակ, եթե հնչյունային լսողությունը զարգացնող վարժությունները պարբերաբար չեն կատարվում, դարձյալ անօգուտ է: Այս աշխատանքին նվիրված ժամանակը երբեք պետք չէ խնայել՝ նկատի ունենալով, որ գրաճանաչության նախաայբբենական շրջանի կարևոր խնդիրներից է հնչյունային լսողության զարգացումը, և նախատեսված աշխատանքների զգալի մասը հենց այդ նպատակին են ծառայում:

Այս կարևոր խնդրի լուծումը, ինչպես ասացինք, հիմնականում պիտի իրականացվի դիդակտիկ խաղերի միջոցով, որոնք ամենաարդյունավետ միջոցներն են, քանզի՝

- երեխաներին սովորեցնում են կարդալ՝ դասարանում ստեղծելով ուրախ, աշխույժ, անկաշկանդ մթնոլորտ,

- խաղը, բացի երեխաների հնչյունայինլսողության զարգացումից, նաև նրանց մեջ ձևավորում է սեփական գործունեությունը կազմակերպելու, ընկերների հետ համագործակցելու ունակություններ,
- խաղի ժամանակ ակտիվանում են երեխաների մտածողական գործունեությունը, ուշադրությունը, խոսքը, երևակայությունը,
- միևնույն խաղը կարելի է կազմակերպել ոչ միայն բազմակի անգամ, այլև՝ յուրաքանչյուր անգամ տարբեր նպատակներով, որի արդյունքում երեխաներն ուսումնական միևնույն նյութին կանդրադառնան բազմիցս, սակայն քանի որ յուրաքանչյուր անգամ տարբեր խաղերի միջոցով է այն կազմակերպվում, ուսումը կդառնա հետաքրքրաշարժ։

Ներկայացնենք հնչյունային լսողության զարգացմանը նպաստող մի քանի խաղ։

Խաղ 1. «Բնակեցրու՛ կենդանիներին»։

Նպատակը. զարգացնել բառերի հնչյունները լսելու և տարբերակելու երեխաների կարողությունները, ամրակայել հնչյունային լսողությունը։

Կահավորումը. Պատուհանիկներով տնակներ, անհրաժեշտ տառեր, կենդանիների նկարներ։

Ընթացքը. Սեղանին դրված է պատուհանիկներով տնակ։ Տնակի տանիքին ուսուցչուհին փակցնում է որևէ տառ։ Տան բակում «հավաքված» կենդանիներից երեխաներն ընտրում են նրանց, որոնց անունների մեջ լսվում է տանիքում փակցված տառին համապատասխանող հնչյունը, և նկարը պատուհանիկից ներս են գցում։

Խաղն ակտիվացնելու համար հաջորդ անգամ կարելի է այն կազմակերպել՝ փոխելով տանիքին ամրացված տառը։

Խաղը կարելի է կազմակերպել ինչպես ամբողջ դասարանով, այնպես էլ՝ առանձին խմբերով կամ զույգերով։

Խաղ 2. «Հավաքի՛ր ծաղիկը»։

Նպատակը. Ձևավորել բառի հնչյունները տարբերակելու երեխաների կարողությունը, զարգացնել նրանց հնչյունային լսողությունը և վերլուծական-համադրական խոսքային գործունեություն ծավալելու ունակությունը։

Կահավորումը. Գունավոր շրջանակներ, որոնց մեջտեղում գրված են առանձին տառեր, ինչպես նաև ծաղկի գունավոր թերթիկներ, որոնց վրա փակցված են առարկայական նկարներ։

Ընթացքը. երեխաների յուրաքանչյուր զույգ ստանում է ծաղիկների «միջուկները» (գունավոր շրջանակներ), որոնց վրա գրված են տառեր, օրինակ՝ **կ**: Յուրաքանչյուր զույգի առջև դրվում են նաև ծաղիկների տերևներ, որոնց վրա փակցված են առարկայական նկարներ: Երեխաները պիտի ընտրեն և ծաղկի «միջուկին» փակցնեն այն թերթիկները, որոնց վրա պատկերված առարկաների մեջ կա **կ** հնչյունը:

Խաղ 3. «Այն ո՞վ է կանչում»:

Նպատակը. Զարգացնել երեխաների լսողությունը, ուշիմությունը, հնչյուններն ունկնդրելու կարողությունը, ծանոթացնել տարբեր բնաձայներին:

Ընթացքը. Աշակերտներից մեկը հրավիրվում է գրատախտակի մոտ: Նա կանգնում է մեջքով դեպի դասարանը: Ուսուցչուհին հերթով մոտենում է երեխաներին և շշնջում, թե ինչ միջատի, թռչնի, կենդանու ձայն պիտի հանի տվյալ երեխան: Երեխաները ձայն են տալիս՝ կու-կու, բզզզ, կվա-կվա,կըրռ… և այլն: Գրատախտակի առջև կանգնած երեխան ոչ միայն պիտի ասի, թե բնության մեջ որ կենդանին է այդ ձայնը հանում, այլև՝ որ երեխան էր «կանչողը»:

Խաղ 4. «Բառաշղթա»:

Նպատակը. Զարգացնել երեխաների հնչյունային լսողությունը, բառը վերլուծելու կարողությունը, հարստացնել բառապաշարը:

Կահավորումը. Տարբեր առարկաների փոքրածավալ նկարներ:

Ընթացքը. Դասարանը բաժանվում է խմբերի: Յուրաքանչյուր խմբի առջև լցված են առարկայական նկարներ: Հարկավոր է ընտրել և իրար կողքի դասավորել նկարներն այնպես, որ մի նկարում պատկերված առարկայի անվան վերջին տառով սկսվի հաջորդ նկարում պատկերված առարկայի անունը:

Խաղ 4. «Գտիր սխալը»:

Նպատակը. Սովորեցնել երեխաներին լսել և ճիշտ արտաբերել, տարբերել հնչյունները, զարգացնել բառերը հնչյունային վերլուծության ենթարկելու նրանց կարողությունը, ձևավորել բառի վանակահնչյունային կառուցվածքը գծապատկերի միջոցով ճանաչելու ունակություն, զարգացնել երեխաների ուշիմությունը:

Կահավորումը. Առարկայական նկարներ, որոնց հետևում մատիտով տրված են նկարներում պատկերված առարկաների անվանումների գծապատկերները: Գծապատկերներից մի քանիսը սխալ է գծված:

Առաջադրանք. Դիտել նկարները, որոշել համապատասխան գծապատկերները, գտնել գծապատկերների սխալները և ուղղել:

Այսպիսով, նշված և նման այլ դիդակտիկ խաղերը նպաստում են ոչ միայն երեխաների հնչյունային լսողության զարգացմանը, այլև ուսումնական գործընթացում վերացնում են լարվածությունը, վախը, երեխաների մեջ հաղթահարվում է սեփական ոչ լիարժեքությունն այդ ոլորտում, ստեղծվում է դրական զգացմունքային

տրամադրվածություն, աշխատանքից հաճույք ստանալու հոգեկան վիճակ: Խաղային մեթոդը ստեղծում է դասի ժամանակ ճանաչողական ակտիվությունը պահպանելու, ուսումնական բարդ, հոգնեցնող գործընթացը թեթևացնելու հնարավորություն:

Նախաայբբենական փուլի հիմնական խնդիրներն են՝ հեքիաթների միջոցով սովորողների ստեղծագործական, տրամաբանական-վերլուծական մտածողության և ուսումնական հմտությունների զարգացումը, բառապաշարի հարստացումը: Նախաայբբենական փուլի նպատակներին հասնելու ուղիները վարժությունների և առաջադրանքների միջոցով երեխաների համապատասխան հմտությունների զարգացումն է:

Նախաայբբենական փուլի կազմակերպման բարդությունները պայմանավորված են երեխաների տարիքային առանձնահատ-կություններով: Կրտսեր դպրոցական տարիքը անհատի զարգացման կարևոր փուլ է, մանկության գագաթնակետը: Պահպանվում են շատ որակներ, բայց նա արդեն սկսում է կորցնել մանկան անմիջականությունը, և առաջանում են մտածողության մեկ այլ որակ և տրամաբանություն: Ուսումը երեխայի համար նշանակալից գործունեություն է: Դպրոցում նա ձեռք է բերում ոչ միայն նոր գիտելիքներ, ու կարողություններ, այլև որոշակի սոցիալական կարգավիճակ: Փոխվում են հետաքրքրությունները, արժեքները, երեխայի կյանքի ամբողջ դրվածքը:

«Մայրենի» առարկայի գլխավոր առանձնահատկությունը գործնական ուղղվածությունն է: Այս նպատակադրումը պահանջ է ներկայացնում ուսուցման բովանդակության մեջ առանձնահատուկ տեղ տալ բառի ուղղախոսական և ուղղագրական կանոնների ճիշտ կիրառմանը:

Նախաայբբենական փուլի հիմնական նպատակը երեխաներին գրաճանաչության նախապատրաստելն է: Այբբենարանում ներկայացված թեմատիկ նկարները, նկար-պատմությունները, նախադասության և բառի ընդհանրացված գծապատկերները, բառի վանկային ու հնչյունային կազմի գծապատկերները խոսքի զարգացման, լեզվական վերլուծությունների ու համադրությունների, կարդալու կարողության ձևավորման հիմքերն են:

Նախաայբբենական բաժինը կառուցված է այնպես, որ երեխաների մեջ արթնացնի հետաքրքրասիրություն, սեր գրքի և դպրոցի նկատմամբ, սովորելու ցանկություն: Հաճույքով կատարելով դասագրքի բազմաբնույթ առաջադրանքները՝ երեխաներն ուժեղ են զգում իրենց, դառնում են զվարթ, շփվող,և նրանց չի լքում հաջողակ լինելու զգացումը:

Նախագրային բաժնի հիմնական նպատակը երեխաներին աստիճանաբար ուսումնական գործընթացի մեջ ներգրավելն է, աննկատ կերպով նրանց ավելի ու ավելի բարդ առաջադրանքների կատարմանը նախապատրաս-տելը, միաժամանակ, նրանց

մտածողության զարգացումը, ստեղծագործական ունակությունների բացահայտումը, ճանաչողական հետաքրքրությունների խթանումը:

Նախաայբբենական փուլը պետք է ստորաբաժանել ըստ հիմնական նպատակների և այդ ուղղությամբ կատարել նախապես պլանավորված որոշակի գործողություններ:

Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակային առաջին գործողությունը երեխաների ուշադրության կենտրոնացմանը միտված վարժությունների կազմակերպումն է, ընդ որում՝ պետք է երեխաներին առաջադրել նախ հեշտ վարժություններ, ապա՝ աստիճանաբար ավելի բարդ տարբերակներ:

Փորձը ցույց է տվել, որ հատկապես կրտսեր տարիքի երեխաներին հետաքրքրում են բազմաբնույթ լեզվատրամաբանական, ուսուցողական առաջադրանքները. դրանց շնորհիվ նրանք առավել հեշտ են յուրացնում ուսուցանվող նյութը և ավելի են կապվում գրքին:

Այդ կերպ նրանք սովորում են սովորել և դրանից հաճույք ստանալ, սովորում են մտածել, ինքնուրույն վճիռներ կայացնել, գնահատել իրենց կատարածը, համեմատվել ուրիշների հետ, մրցել:

Զարգանում են նրանց ստեղծագործական երևակայությունը, հիշողությունը, մտածողությունը, նրանց մեջ ձևավորվում են երկարատև կենտրոնանալու, կամք դրսևորելու ունակություններ:

Ներկայացնենք մի խումբ խաղեր, որոնք լուծում են վերոհիշյալ խնդիրները:

- **Գտի՛ր զույգը**: Ուշադրություն կենտրոնացման ուղղված ամենահեշտ վարժություններից է. երեխային առաջարկվում են տարբեր պատկերներ, որոնցից նա պետք է գտնի չափով, ձևով, գույնով նման պատկերներ:
- **Գտի՛ր ավելորդը**: Բնույթով նույնն է, ինչ նախորդը. երեխան պետք է լարի ուշադրությունը և հասկանա թե նկարում ո՞ր պատկերն է ավելորդ:
- **Նշի՛ր հաջորդը**: Առաջադրանքը կատարելիս երեխան պետք է գտնի տրամաբանական որևէ օրինաչափություն և ըստ այդ օրինաչափության մտածի, թե որ առարկայի պատկերը կլինի հաջորդը, ընդ որում յուրաքանչյուր առաջադրանքի դեպքում օրինաչափությունը փոխվում է:
- **Ո՞րն է ավելորդ**: Նպաստում է ոչ միայն ուշադրության այլև մտածողության զարգացմանը: Ըստ ինչ-որ հատկանիշի երեխան պետք է ընտրի որոշ առարկաներ: Օրինակ՝ աշակերտին տրվում է զամբյուղ, և նա պետք է հասկանա, որ անհրաժեշտ է ընտրել մրգեր, գրապահարանի դեպքում՝ գրքեր և այլն:

Այս փուլի հաջող անցկացումից հետո պետք է սահուն անցում կատարել նախադասություն կազմելու, պատմություն հորինելու և պատմելու փուլին: Այս

նպատակի իրականացման ուղիները ևս տրվում են տարբեր վարժությունների տեսքով՝ պարզից մինչև բարդ, օրինակ.

- **Գտի՛ր պակասող դրվագը:** Սովորողները պատմություն են հորինում թեմատիկ նկարի շուրջ: Նրանք որոշում են, թե որ դրվագներից է բաղկացած նկար-պատմությունը, և նշում են այն դրվագը, որը պակասում է թեմատիկ նկարում:
- **Գտի՛ր տարբերությունը:** Առաջադրանքն իրենից ներկայացնում է համադրելու և հակադրելու, այսինքն՝ համեմատելու մտավոր գործողություն, ինչն արդյունավետ է կրտսեր դպրոցականի իմացական ակտիվության խթանման և նրա ընհանրացնող մտածողության զարգացման համար: Սովորողները պետք է նշեն, թե որ զույգի նկարներն են միմյանցից տարբերվում:
- **Ո՞ր դրվագն է առանձնացված:** Սովորողները պատմություն են հորինում թեմատիկ նկարի շուրջ: Նրանք որոշում են թե որ դրվագներից է բաղկացած նկար-պատմությունը, և նշում են այն դրվագը, որն առանձնացված է տրված նկար-պատմությունից: Այդպիսով՝ առաջադրանքը զարգացնում է երեխաների՝ նախադասություններիը պատմությունից առանձնացնելու ունակությունները:
- **Գտի՛ր ավելորդը**: Տեսական-մեկնաբանական վարժություն է:

Առաջադրանքի կատարման համար սովորողներն ուշադիր դիտում են նկար-պատմությունն ու նկար-նախադասությունները և նշում այն նկար-նախադասությունը, որն ավելորդ է, այսինքն՝ առանձնացված է այդ նկար-պատմությունից:

Մյուս փուլի համար ուսուցչից պահանջվում է սովորեցնել բառեր, հնչյուններ, վանկեր, ձայնավորներ և բաղաձայններ: Այդ նպատակի իրականացման համար ևս պետք է ընտրել որոշակի վարժություններ, առաջադրանքներ և գնալով բարդացնել դրանք, որպեսզի երեխաների մեջ տեղի ունենա տեսական, վերլուծական, մեկնաբանական մտածողության զարգացում: Բառեր սովորելու համար կան մշակված որոշակի վարժություններ.

- **Գտի՛ր սխալը:** Տրված են արտասովոր ու անհեթեթ նկարներ: Այդ անհամապատասխանությունը նկատելու համար երեխայից պահանջվում են ճանաչողական գիտելիքներ և դիտունակություն: Նա պետք է նշի անհեթեթություն արտահայտող նկարը:
- **Ո՞ր պատկերն է բացակայում:** Տեսական-մեկնաբանական վարժություն է: Ուշադիր դիտելով նկարը՝ սովորողները պետք է նշեն այն պատկերը, որը ներկայացված չէ թեմատիկ նկարում: Առաջադրանքը կատարելիս նրանք ընկալում են, որ բառը կոնկրետ իմաստ արտահայտող լեզվական փոքրիկ միավոր է:

Վանկեր և հնչյուններ սովորելու համար կարելի է առաջադրել հետևյալ վարժությունները.

- **Միավանկ և բազմավանկ բառեր:** Տեսական-մեկնաբանական բնույթի վարժություն է: Առաջադրանքը կատարումը նպաստում է բառերը համապատասխան արտասանությամբ վանկերի բաժանելու կարողության ձևավորմանը:
- **Դի՛ր գծապատկերի կողքին:** Սովորողները հաշվում են տրված նկար-բառերի վանկերը: Ապա հաշվում են գծապետկերի մասերը և որոշում, թե որ բառին համապատասխանում այդ գծապատկերը:
- **Նշի՛ր ավելորդը:** Առաջադրանքը կատարելու համար երեխաները պետք է անվանեն առարկայական նկարները, այդ բառերը բաժանեն վանկերի և նշեն այն միակ նկար-բառը, որն իր վանկերի քանակով տարբերվում է մյուսներից:
- **Ո՞ր նկարներն են սկսվում նույն հնչյունով:** Սովորողները նախ հնչյունային վերլուծության են ենթարկում նկար-բառերը, ապա նշում միևնույն հնչյունով սկսվող նկար-բառերը:
- **Նույն հնչյունով սկսվող և վերջացող բառեր:** Առաջադրանքը նպաստում է հնչյունային լսողության զարգացմանը, միևնույն հնչյունը բառասկզբում, բառավերջում լսելու և օգտագործելու կարողությունների ձևավորմանը:
- **Մեկ հնչյունով տարբերվող բառեր:** Նկար բառերը հչյունային վերլուծության ենթարկելով՝ սովորողները նշում են այն նկար բառերի զույգը, որոնք միմյանցից տարբերվում են մեկ հնչյունով:
- **Գտի՛ր ձայնավորով ու բաղաձայնով սկսվող և վերջացող բառերը:** Առաջադրանքը նպաստում է արտասանության միջոցով ձայնավոր և բաղաձայն հնչյունների տարբերակման կարողության ձևավորմանը:
- **Նույն ձայնավորով և նույն բաղաձայնով սկսվող բառեր:** Առաջադրանքը նպաստում է սովորողների արտասանության միջոցով ձայնավոր և բաղաձայն հնչյունները տարբերակելու կարողության զարգացմանը:

Նախագրային շրջանում երեխաները ծանոթանում են կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչներին, կատարում զանազան համեմատություններ, գտնում առարկաների նմանություններն ու տարբերությունները, վարժվում են երկարատև և լարված աշխատել որևէ առաջադրանք կատարելիս: Սովորում են գտնել, թե որ առարկաներն են «ընկերներ», և որոնք՝ «հակառակորդներ», վարժվում են մտնել և դուրս գալ բավիղներից. աշխատեցնելով հայացքը և մատիտը՝ առարկաների միջից գտնում են ավելորդը: նրանք վարժվում են խոսքից առանձնացնել նախադասություն, նախադասությունից՝ բառ, բառերը վանկատել և ենթարկել հնչյունային վերլուծության, իմանում են, թե ինչ է գծապատկերը, վանկային կորը, հնչյունը, ճանաչում ենձայնավոր հնչյունները, տեղեկանում են նրանց վանկարար դերի մասին:

Զարգանում են նրանց հնչյունաձայնային լսողությունը, բառից այս կամ այն հնչյունն առանձնացնելու կարողությունը, լսելու և խոսք կառուցելու, մտքերը շարադրելու հմտությունը: Այս ամենը կատարվում է երեխաների համար հոգեհարազատ այն միջավայրում, որն ստեղծում է դասգիրքը՝ իր գունագեղությամբ, առաջադրանքների հետաքրքրաշարժությամբ, նյութի մատուցման խաղային հնարներով:

Ուսումնական այս շրջանի հիմնական խնդիրներն են հեքիաթների միջոցով սովորողների ստեղծագործական-երևակայական մտածողության զարգացումը, բանավոր խոսքի զարգացումը, բառապաշարի հարստացումը, ուսումնական այլ հմտությունների զարգացումը:

Նախաայբբենական փուլի աշխատանքները ներառում են հեքիաթների, հանելուկների, բանաստեղծությունների, խաղիկների շարք, որոնց միջոցով հնարավոր է դառնում հասնել հիմնական նպատակին: Դրանցից է օրինակ՝ «Երեք արջերի» հեքիաթը: Ուսուցիչը պետք է տեղեկություններ տա արջերի մասին, հարցնի, թե երեխաները ինչ են լսել, ինչ պատմություններ գիտեն, որ հեքիաթներում են հանդիպել արջին: Այնուհետև պետք է հեքիաթ ընթերցել և քննարկել աշակերտների հետ, նկարագրել հերոսներին: Այս ամենին հաջորդում է առաջադրանքների փուլը: Աշակերտներին հանձնարարվում է ամբողջից՝ հատվածից, նախադասությունից, բառի անջատում, բառերի վանկատում և հեգում:

Այսպիսով, նախաայբբենական փուլի հիմնական խնդիրներն են՝ հեքիաթների միջոցով սովորողների ստեղծագործական երևակայական մտածողության ձևավորումը, բանավոր խոսքի զարգացումը, բառապաշարի հարստացումը և ուսումնական այլ հմտությունների, այդ թվում տրամաբանական-վերլուծական մտածողության զարգացումը:

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նախապրբենական փուլում երեխաները ծանոթանում են կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչներին, կատարում զանազան համեմատություններ, գտնում առարկաների նմանություններն ու տարբերությունները, վարժվում են երկարատև և լարված աշխատել որևէ առաջադրանք կատարելիս: Սովորում են գտնել, թե որ առարկաներն են «ընկերներ», և որոնք՝ «հակառակորդներ», վարժվում են մտնել և դուրս գալ բավիղներից. աշխատեցնելով հայացքը և մատիտը՝ առարկաների միջից գտնում են ավելորդը: նրանք վարժվում են խոսքից առանձնացնել նախադասություն, նախադասությունից՝ բառ, բառերը վանկատել և ենթարկել հնչյունային վերլուծության, իմանում են, թե ինչ է գծապատկերը, վանկային կորը, հնչյունը, ճանաչում ենձայնավոր հնչյունները, տեղեկանում են նրանց վանկարար դերի մասին: Զարգանում են նրանց հնչյունաձայնային լսողությունը, բառից այս կամ այն հնչյունն առանձնացնելու կարողությունը, լսելու և խոսք կառուցելու, մտքերը շարադրելու հմտությունը: Այս ամենը կատարվում է երեխաների համար հոգեհարազատ այն միջավայրում, որն ստեղծում է դասագիրքը՝ իր գունագեղությամբ, առաջադրանքների հետաքրքրաշարժությամբ, նյութի մատուցման խաղային հնարներով:

Այսպիսով, նախապրբենական փուլի հիմնական խնդիրներն են՝ հեքիաթների միջոցով սովորողների ստեղծագործական երևակայական մտածողության ձևավորումը, բանավոր խոսքի զարգացումը, բառապաշարի հարստացումը և ուսումնական այլ հմտությունների, այդ թվում տրամաբանական-վերլուծական մտածողության զարգացումը:

Գրաճանաչության ցանկացած մեթոդով աշխատելիս, անկախ հայեցակարգային դիրքորոշումներից, գրեթե առանց բացառության առանձնացվում է հատուկ նախապատրաստական շրջան, որի ժամանակ լուծվում են ուսուցման այդ փուլի մանկավարժահոգեբանական ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մշակված գրաճանաչության շրջանի բովանդակությամբ և մեթոդներով, նախադպրոցական տարիքի երեխաների տարիքային առանձ-նահատկություններով, կրթօջախի տեսակով և կրթության՝ այդ օղակի նպատակներով պայմանավորված որոշակի խնդիրներ:

Այսպիսով, որպեսզի երեխաները կարդալ և գրել սովորեն, ավելի հեշտ յուրացնեն ուսուցանվող նյութը, կապվեն գրքին, նրանք պետք է սիրեն գիրը, կարդալը: Երկար տարիների իմ աշխատանքային փորձը ցույց է տվել, որ հատկապես կրտսեր տարիքի երեխաներին հետաքրքրում են բազմաբնույթ լեզվատրամաբանական, ուսուցողական առաջադրանքները, խաղերը. դրանց շնորհիվ նրանք սովորում են սովորել և դրանից հաճույք են ստանում: Զարգանում են նրանց ստեղծագործական երևակայությունը, հիշողությունը, մտածողությունը, նրանց մեջ ձևավորվում են երկարատև կենտրոնանալու, կամք դրսևորելու ունակություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուլամիրյան Ջ., «Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա», «Զանգակ-97», 2009։

2. Գյուլամիրյան Ջ., «Դասի կազմակերպման առանձնահատկությունները վեց տարեկաններով համալրված առաջին դասարանում», Եր., «Լույս», 1984։

3. «Նախաշավիղ», 3.2017։

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ----------1

Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիները ----------2

Եզրակացություն ----------24

Գրականության ցանկ ----------25